ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հասարակագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Գառնիկ Արտաշեսի Սուքիասյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր **Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Բիզնես իրավունք» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է ՀՊՏՀ կրթական ծրագրերում ներառված «Բիզնես իրավունք» դասընթացը ուսումնասիրողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև պետական և տնտեսական մարմինների աշխատողների և քաղաքացիների համար: Բիզնես իրավունքը հանրային և քաղաքացիական իրավունքի տեսական և գործնական հիմնախնդիրների իրացման բարդ համակցություն է, որի ուսումնասիրությունները ժամանակակից իրավագիտության ոլորտի օրակարգային խնդիր է: Բիզնես իրավունքի հիմնախնդրի իրավական կարգավորման առանձնահատկությունները բացահայտելու նպատակով առաջին անգամ փորձ է կատարվել բիզնես գործունեության իրավահարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումները սահմանազատել հանրային իրավական կարգավորումներից: Աշխատանքն ամբողջացնելու նպատակով մասնավոր և հանրային իրավական կարգավորումների միջոցով բացահայտվել են բիզնես գործունեության պետական կարգավորման տարբեր եղանակների ժամանակակից ոլորտները գործող քաղաքացիական և հանրային իրավունքի օրենսդրության շրջանակներում: Ձեռնարկի նպատակն է ուսանողներին զինել բիզնես գործունեության ոլորտի տնտեսագիտական և իրավական կարգավորման առանձնահատկությունների յուրացման նրբությունների և դրանց գործնական կիրառման արդյունավետության հնարքների տիրապետմանը:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 2 գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև երկու ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Աշոտ Վարազդատի Մաթևոսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

2. Հասմիկ Արշավիրի Ստեփանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկն ունի միջառարկայական նշանակություն և կարող է օգտակար լինել տնտեսագիտություն, իրավագիտություն ուսումնասիրող ուսանողների համար՝ կողմնորոշվելու բիզնես-պետություն իրավահարաբերություններին առնչվող հարցերում:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել հասարակագիտության ամբիոնի 2024 թվականի մարտի 25-ի նիստում (արձանագրություն N 8) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների դրական եզրակացությունները, երկու ներքին գրախոսների դրական կարծիքները, հասարակագիտության ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ հասարակագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Գառնիկ Արտաշեսի Սուքիասյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր **Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Բիզնես իրավունք» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Լ. Ս. Բաբայան**

2024 թ. հունիսի 24
Երևան